ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ՀՅԹԻ)

«ՀԱՅ ՈՐԲԵՐ. ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ԿԱՅՈՒԹԵԱՆ, ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒ, ՀՈԳԱՏԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԵՒ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ» ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԱՍԻՆ

Երիտթուրքական կառավարության կողմից իրագործված Հայոց ցեղասպանության ընթացքում հայ երեխաների վիճակը թերևս ամենածանրն էր: Տարագրության ճանապարհը հաղթահարելուն զուգընթաց նրանց առջև ծառացած էր վերապրելու խնդիրը, բացի այդ, նրանց մշտապես սպառնում էր ձուլման վտանգը: Տասնյակհազարավոր երեխաներ ենթարկվում էին սեռական բռնությունների, կրոնափոխության՝ իսլամական միջավայրում աստիճանաբար կորցնելով իրենց ազգային ինքնությունը: Երիտթուրքական կառավարության հրամանով և անմիջական վերահսկողությամբ Օսմանյան կայսրության ողջ տարածքում հայ որբերի համար պետական միջոցներով հիմնվում են որբանոցներ, որտեղ հայ երեխաները թրքացվում և իսլամացվում են: Քաղաքական այս իրավիճակում, մասնավորապես, 1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո հիմնվում են բազմաթիվ որբանոցներ, սկսում են գործել բազմաթիվ միջազգային և հայկական կազմակերպություններ, ինչպես նաև սկսում են գործել անհատներ, որոնց նպատակը մեկն էր՝ հնարավորինս շատ հայ որբեր ու երեխաներ փրկել:

Նշենք, որ որբերի ու որբանոցների հետ կապված թվերը միշտ փոփոխական են հասկանալի պատճառներով. նախ՝ ցեղասպանության իրագործման սկզբնական շրջանում տեղաշարժերը տարերային էին, սովը, համաճարակը բազմաթիվ կյանքեր էին խլում, զանգվածային ոչնչացումներն ու կլիմայական պայմաններն օր օրի փոխում էին վիճակագրական պատկերը:

Որբերին առնչվող հարցերի, մասնավորապես, որբերի թվաքանակի ուսումնասիրման համար կարևոր սկզբնաղբյուր է «Հայ որբեր.

տեղեկագիր հայ որբերու կացութեան, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ»[1] փաստաթուղթը, որը կազմվել է Հայ ազգային պատվիրակության պահանջով 1923 թ., փաստ, որը մեծ կշիռ է հաղորդում փաստաթղթի հավաստիությանը: Տեղեկագիրն ամենայն հավանականությամբ կազմվել է Արամ Անտոնյանի կողմից, չնայած ոչ մի տեղ գրքույկի վրա նրա անունը չի նշվում, բայց հաշվի առնելով այն փաստը, որ նա այդ ժամանակ եղել է Ազգային պատվիրակության քարտուղար, հիմք է տալիս նրան համարել սույն տեղեկագրի կազմողը:

Հոդվածի շրջանակներում վերոնշյալ տեղեկագրի հիման վրա ներկայացվելու է հայ որբերի թվական տվյալները, տարբեր վայրերում հիմնված որբանոցներն ու այն կազմակերպությունները, որոնց խնամատարությամբ գործել են որբանոցները: Այս տեղեկագիրը մինչ այժմ շրջանառության մեջ չի դրվել, իր կարևորությամբ բացառիկ է, քանի որ համապարփակ տեղեկություններ է հաղորդում Հայոց ցեղասպանությունից հետո սիրիական անապատներում հայտնված, հետագայում տարբեր ուղղություններով տեղաբաշխված հայ որբերի վերաբերյալ:

Տեղեկագրում ամփոփված վիճակագրական տվյալները ներկայացված են ըստ աշխարհագրական բաժանումների և ըստ խնամատար մարմինների: Առանձին տարածաշրջաններով ներկայացված են Կ.Պոլիսի, Սիրիայի, Երուսաղեմի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների, Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Կանադայի որբանոցների ցանկերը: Տեղեկագրի վերջում ներառված է նաև Տեղեկագրի ֆրանսերեն թարգմանված տարբերակը:

---

[1] Սույն Տեղակագիրը մեզ է տրամադրել ՀՅԹԻ հիմնադրամի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի վարիչ, աղբյուրագետ Միհրան Մինասեանը, որի համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նրան:

Մինչ վիճակագրական տվյալների վերլուծությունը, հարկ է ներկայացնել նաև Մերձավոր Արևելքում տիրող քաղաքական իրավիճակը՝ որբերի տեղաշարժերը հստակ պատկերացնելու համար: Նախ նշենք, որ սիրիական տարածքում հայկական որբանոցներ հիմնվել են բռնի տեղահանությունների առաջին քարավանների հասնելու ընթացքում՝ 1915 թ. ամռանից սկսած: Տեղում գործել են Մերձավոր Արևելքի նպաստամատույց, Գերմանական Արևելյան առաքելություն և այլ կազմակերպություններ: Վերջիններիս հիմնադիր երկրները հյուպատոսարաններ ունեին Խարբերդ, Ադանա, Հալեպ, Ալեքսանդրետ, Տրապիզոն, Մերսին քաղաքներում և տեղի դիվանագիտական ներկայացուցիչները փորձում էին նպաստավոր պայմաններ ստեղծել՝ հայանպաստ գործունեություն ծավալելու համար:

Որբերի հավաքագրման և որբանոցներում տեղավորելու հարցերով զբաղվել են նաև հայկական հոգևոր և բարեգործական կառույցները: Եկեղեցիներն ու դրանց հարակից տարածքները վերածվում էին փրկության կենտրոնների, որտեղից գաղթական երեխաները տեղափոխվում էին որբանոցներ: Սկիզբ է դրվում «Մեկ հայ՝ մեկ ոսկի» առաքելությանը: Արևմտյան Հայաստանի տարածքում որբահավաք աշխատանքներ իրականացնում են օտարերկրյա կազմակերպությունները, ինչպես նաև հայ անհատներն ու հայրենակցական միությունները:

Կիլիկիայից և Միջագետքի անապատներից որբահավաք աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են նաև Արևելյան լեգեոնի կազմում կռվող հայ զինվորականները: Փրկագնման գործընթացն ու փրկվածների նվազագույն կարիքների ապահովումը հսկայական ֆինանսական միջոցներ էր պահանջում: Խնդիրը լուծելու նպատակով աշխարհի տարբեր վայրերում կազմակերպվում են «Որբերի կիրակի», «Որբերի փրկության շաբաթ», «Փրկենք անապատի որբերը» կարգախոսներով հանգանակություններ: Հանրությանն իրազեկելու նպատակով տպագրվում են գրքեր, ալբոմներ, որոնց հասույթը փոխանցվում է խնամատարության գործին: Այս ամենն իրականացվում է «վաղն

արդեն ուշ է լինելու» կամ «միայն հայուն դրամը կարող է հային փրկել» կարգախոսներով:

1919-1920 թթ. միայն Կիլիկիայի Ադանա, Հաճըն, Դորթ-Յոլ, Հարունիե, Օսմանիե, Տարսոն, Մերսին, Մարաշ, Այնթափ քաղաքների որբանոցներում իրականացվել է շուրջ 10 հազար որբի խնամք: 1922 թ. ապրիլին Ուրֆայի շրջակայքից, Մարդինից, Խարբերդից, Ակնից և Մալաթիայից շուրջ 9.500 որբեր շվեյցարացի միսիոներ Յակոբ Կյունցլերի անմիջական պատասխանատվությամբ տարհանվել և տեղաբաշխվել են Սիրիայի ու Լիբանանի որբանոցներում[2]: Կիլիկիայի հայաթափումից հետո շուրջ 20 հազար որբեր ապաստան են գտել Հալեպ, Ջիբեյլ, Մամելթեյն, Ղազիր, Ջունիե, Բեյրութ, Սայդա և Դամասկոս քաղաքներում: Նրանց մի մասն էլ տեղափոխվել է Հունաստան, որտեղ որբախնամ գործը հիմնականում իրականացրել է Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կազմակերպությունը: Քորֆուի հայկական որբանոցի խնամատարությունն ստանձնել է բրիտանական «Լորդ քաղաքագլխի» հիմնադրամը: Արևելյան Հայաստանում ապաստանած որբերի մեծ մասը 1915 թ. Վասպուրականից և հարակից շրջաններից ներգաղթած, ինչպես նաև 1918-1920 թթ. ռազմական գործողությունների հետևանքով որբացած երեխաներ էին՝ ավելի քան 45 հազար[3], որից 30 հազարը ապաստան էր գտել Ալեքսանդրապոլում: Վերջիններս գտնվել են Հայաստանի Հանրապետության, ապա՝ ՀԽՍՀ կառավարությունների հոգածության ներքո՝ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի օժանդակությամբ:

Վերոհիշյալ հիմնական տեղաշարժերից հետո է ամփոփվել Տեղեկագրում նշված տվյալները, ինչը հնարավորություն է տալիս փաստելու, որ ներկայացված թվերը հնարավորինես վերջնական են: Իհարկե, հարկ է նշել, որ այստեղ ներառված չեն այն որբերը, որոնք

---

[2] Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1975, էջ 255:

[3]Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 252:

թուրքական հարեմներում ու իսլամական միջավայրում ձուլվեցին՝ կորցնելով հայկական ինքնությունը կամ մնացին թուրքական որբանոցներում: Նշենք նաև, որ դեռևս 1919-1922 թվականներին արևմտահայ վերապրածների, այդ թվում՝ որբերի, գերության մեջ գտնվող կանանց և երեխաների մասին վիճակագրական տվյալների հավաքմամբ հիմնականում զբաղվել են Հայոց պատրիարքարանին կից գործող երկու կառույցներ՝ Ազգային խնամատարությունը և Տեղեկատու դիվանը[4]:

Տեղեկագրի առաջին մասում՝ «Ընդհանուր ծանոթութիւններ հայ որբերու, որբանոցներու եւ անոնց հոգատարութեան մասին» առանձին-առանձին ներկայացվում է որբանոցների և որբերի տվյալները՝ ըստ աշխարահագրական վայրերի: Երկրորդ մասը վերնագրված է «Վիճակագրական տեղեկութիւններ հայ որբերու եւ հոգատար մարմիններու»: Ստորև ներկայացվելու են միաժամանակ երկու բաժինների տեղեկությունների համադրությունը:

Տեղեկագրում նշվում է, որ Կ.Պոլսում գտնվող որբերի ընդհանուր թիվը 3044 է, որից 1.554 տղաներ, 1.490 աղջիկներ[5]: Ազգային հոգատարության տակ գտնվել են գաղթականների որբերը, Գարակեոզյան և Գալֆյան որբանոցները, ինչպես նաև ազգային հոգատարության տակ և միաժամանակ ամերիկյան աջակցությամբ խնամվող որբերը[6]: Ընդ որում՝ ազգային խնամատարության տակ եղել են 2.386

---

[4] Թաթոյան Ռ., Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թվականներին կազմած վիճակագրությունները, https://www.academia.edu/40344821/%D5%84%D5%A5%D5%AE, տեղադրվել է՝ 25 սեպտեմբերի, դիտվել է՝ 1 հոկտեմբերի:

[5] «Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերու կացութեան, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ»: Նշենք, որ Տեղեկագիրը էջադրված չէ, այդ իսկ պատճառով մեջբերումների էջերը նշված չեն՝ տարընթերցումներից խուսափելու համար:

[6] Նույն տեղում:

որբ, իսկ ազգային խնամատարության և ամերիկյան աջակցությամբ խնամք է ստացել 1.057 որբ, որոնցից 300 չարձանագրված որբեր[7]:

Կ.Պոլսում որբանոցների հիմնումը լայնածավալ է դարձել 1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո: 1919 թ. փետրվարի 28-ին գործող Հայ որբախնամի և Տարագրյալների կենտրոնական հանձնաժողովի հիման վրա Կ.Պոլսո պատրիարքարանի վերահսկողությամբ ստեղծվել է Ազգային խնամատարություն մարմինը, որի ընդհանուր տնօրենն էր Մատթեոս Էպլիղաթյանը: Կազմակերպությունը համակարգելու էր մուսուլմանական գերությունից հայ որբերի և կանանց ազատագրման, Միջագետքի ճամբարներից վերադարձող տարագրյալներին նյութական աջակցության տրամադրման աշխատանքները[8]:

1919 թ. մայիսի 15-ին համատեղ կոչով հանդես են եկել նաև Կ.Պոլսի հայոց պատրիարք Զավեն Եղիայանը, հայ ավետարանական համայնքի ազգապետ Զենոբ Պեզճյանը և հայ կաթողիկե համայնքի պատրիարքական փոխանորդ Օգոստինոս արքեպ. Սայեղյանը. «Մենք – հոգեւոր պետերս Տաճկահայաստանի - կու գանք աւելցնել թէ անպատսպար եւ անսուաղ մնացած 70.000 որբեր եւ 800.000 կան դեռ՝ անմիջական խնամքի եւ ձեռնտուութեան ակնդէտ»[9]:

Ազգային Խնամատարության տակ են գործել Գարակոզյան, Գալֆյան և Շշլիի որբանոցները: Թեոդիկն իր 1922 թվականի տարեցույցում նշում է, որ Կ.Պոլսի որբանոցներում կան 3.336 որբեր[10]: Այս թվի մեջ ներառվել է նաև Կեդրոնական (Գյուլելի) որբանոցի սաների թիվը, որն այդ պահին կազմել է 1.069[11]: Հավելենք, որ որբանոցը հիմնվել էր Ազգային խնամատարության կողմից ուր հավաքվել են

---

[7]Չարձանագրված որբեր են համարավել հիմնականում որբանոցներից դուրս, անհատների մոտ, հաճախ նաև գաղթականներում գտնվող ու հայկական ինքնություն գիակցող որբերը:

[8]Էպլիղաթեան Մ., Ազգային խնամատարութիւն, Ընդհանուր տեղեկագիր, Անթիլիաս, 1985, էջ 74:

[9] Նույն տեղում, էջ 280:

[10] Թեոդիկ, Ամէնունուն Տարեցոյցը, ԺԶ տարի, 1922, Կ.Պոլիս, էջ 380-381:

[11] Նույն տեղում, էջ 380:

Կ.Պոլսի զանազան թաղային որբանոցներից՝ 1069 որբեր, և Թեոդիկը եղել է այս վարժարանի մարմնակրթական և սկաուտական պատասխանատուն: Տեղեկագրում այս որբանոցի մասին տեղեկություններ չկան, քանի որ քեմալականների «ջանքերով» որբանոցի գործունեությունը մինչ այդ դադարեցվել էր:

Ինչպես արդեն նշել ենք, Սիրիան ու Լիբանանը մի քանի անգամ են ընդունել հայ որբերին՝ առաջինը՝ 1915 թ., երկրորդ փուլով՝ Կիլիկիայի հայաթափումից հետո, իսկ երրորդ փուլով՝ քեմալականների քաղաքականության արդյունքում, երբ հայկական նահանգները հայաթափվում են: Տեղեկագրում Սիրիայի տարածքում ապաստանած որբերի թիվը նշվում է ըստ նահանգների, որի հանրագումարում՝ 8.630 որբեր. Հալեպում՝ Հալեպի հայկական որբանոցը՝ 1164 հոգի, ՀԲԸՄ-ի կողմից հիմնված Կիլիկիան որբանոց-արհեստանոցը՝ 97 հոգի: Վերջինս գործել է 1922-1925 թթ. Վահան Քյուրքճյանի ղեկավարությամբ, ուր գալիս էին տասնհինգ տարին բոլորած որբերը, մեկ տարի մնում ու արհեստ էին սովորում, ինքնաբավ լինելուց հետո դուրս գալիս որբանոց-ապաստարանից[12]:

Բեյրութի Քելեկյան որբանոցում՝ 575 որբ, Մերձավոր Արևելքի նպաստամատույցի (126) և Անթիլիասի որբանոցներում՝ 1.200 (ավստրալիական նպատամատույց կազմակերպության հոգածության տակ), համագումարում՝ 1.901 որբ:

Լիբանանի Նահր Ալ-Իբրահիմ, Ջիբեյլ, Մամլթեյն, Ղազիր, Նազարեթ, Պրումանայի որբանոցներում՝ 3.984 որբ, Ջունեյհի որբանոցում՝ 284 որբ, Մերձավոր Արևելքի նպաստամատույց որբանոցներից՝ որպես չափահաս արդեն դուրս եկած՝ 1.200 որբ , որոնք որևէ կազմակերպության հոգածության տակ չէին գտնվում):

Հավելենք, որ Տեղեկագրի վերջին՝ չորրորդ մասում, որը վերնագրված է «Ցուցակ. Յունաստան, Պուլկարիա, Ռումինիա, Զուեցերիա, Իտալիա, Սուրիա, Երուսաղեմ, Երեւան գտնուող հայ որբերու»,

---

[12] Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հ. Ա, 1906-1940, Գահիրէ- Փարիզ-Նիւ Եորք, էջ 151:

նշվում է, որ Հալեպում ապաստանել են 1.261, Բեյրությում՝ 1.775, Ջունեյհում՝ 284, Սիրիայի մյուս քաղաքներում՝ 10.000, ընդհանուր՝ 13.320, որից ՀԲԸՄ հոգածության տակ է գտնվել 672 որբ (Հալեպի, Բեյրութի, Քելեկյան-Սիսուան որբանոցներում), Ամերիկյան նպաստամատույց կազմակերպության աջակցությամբ Սիրիայի տարբեր քաղաքներում իրականացվել է 10.000 որբի խնամք, Ազգային հոգատարության և Մերձավոր Արևելքի հոգածության տակ է եղել Հալեպի հայկական որբանոցը՝ 1.164 որբերով և Ջունեյհի որբանոցը 284 հոգի, ընդհանուր 1.448 որբերով: Ավստրալական նպաստամատույցի ջանքերով՝ Անթիլիասի որբանոցում խնամվել են 1200 որբեր, որևէ հոգատարության տակ չգտնվող 1.200 որբ: Պատմական Սիրիայի տարածքում, որն իր մեջ ներառել է նաև ներկայիս Լիբանանի տարածքը, ապաստան են գտել 13.320 որբ:

Երուսաղեմի տարածքում ապաստան են գտել Արարատյան (457 որբ) և Վասպուրականի (352 որբ), ընդհանուր առմամբ 809 որբերով (որոշ աղբյուրներում հանդիպում ենք 823 թիվը): Այս երկու որբանոցներն էլ գտնվել են ՀԲԸՄ հոգածության տակ և Երուսաղեմ են տեղափոխվել 1922թ. փետրվարին՝ Իրաքի Նահր Ալ-Օմարի որբանոցից[13]:

Որբերի առաջին հոսքը Երուսաղեմ է հասել 1917-1918 թթ., երբ անգլիացիները գրավել են Երուսաղեմը: Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունն այստեղ է ուղարկել Վիկտորի Արաշրունուն, ով իր հոգածության տակ է վերցրել 190 որբերի: Երկրորդ հոսքը այստեղ է հասել 1922 թ. փետրվարին՝ իր ընկերակցող ուսուցիչներով: Եղիշե պատրիարք Դուրյանը վանքի երկու նոր հարկաբաժիններ է տրամադրել, ինչպես նաև Բահչե և Չամ թաղերը: Հարկաբաժիններ են տրամադրվել նաև Արարատյան երկսեռ որբանոցին, որը նաև արհեստանոց է ունեցել: Արարատյան որբանոցի նվագախումբը տեղափոխվել է Եթովպիա՝ դառնալով թագավորական արքունի նվագախումբը,

[13]«Արեւ», Աղեքսանդրիա, թիւ 126, 24.02.1922

որբերի մի մասն էլ Վասպուրականի որբանոցի սաների հետ տեղափոխվել են Բեյրութի որբանոց[14]:

Տեղեկագրում նշվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում, որը նշվում է Երևանի Հանրապետություն, 1923 թ. հունիսի դրությամբ ապաստանել են 22 հազար որբ: Երևանի, Ալեքսանդրապոլի և Ջալալ Օղլիի որբանոցներում եղել են 22.000 որբեր: Այս որբերից 21.450 գտնվել էին Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության հոգածության տակ, իսկ 550 չափահաս որբեր՝ ազգային խնամատարության տակ:

Տեղեկագրում Վրաստանը ներառված չէ, բայց հարկ է նշել, որ դեռևս 1920 թ. հուլիսի 12-ով թվագրված «Մեծ պատերազմի արդյունքում տուժած հայ երեխաները, նրանց փրկության գործը. ներկա վիճակ, կարիքներ» վերնագիրը կրող ֆրանսերեն զեկույցը, որը պատրաստվել էր Տեղեկատու դիվանի կողմից կամ նրա տրամադրության տակ գտնվող տվյալների հիման վրա «Փրկեք պատերազմից տուժած երեխաներին» միջազգային կազմակերպության Ժնևի կենտրոնական կոմիտեին ներկայացվելու նպատակով, նշվում է, որ Վրաստանի և Կովկասի շրջաններում այդ ժամանակ եղել է մոտ 10.000 որբ[15]:

Հունաստանի որբերի հետ կապված՝ ամեն դեպքում ծանոթագրությունում նշվում է, ինչը և բնական ու հասկանալի է, որ որբերի համար հստակ թվական տվյալներ հնարավոր չէ նշել:

Ընդհանուր առմամբ Հունաստանում ապաստան են գտել մեծաթիվ որբեր, որոնք տեղաբաշխված են եղել հետևյալ բնակավայրերով՝ Աթենք՝ 2.000, Խալքիս՝ 2900, Սիրա՝ 750, Քորֆու՝ 2.500, Օրոբոս՝ 700 որբեր: Նշված որբանոցների հոգածությունը ստանձնել է Մերձավոր Արևելքի նպաստամատույցը՝ 5000 որբերով: Լոնդոնի Լորդ քաղաքագլխի հիմնադրամը հոգացել է 750 որբերի խնամքը:

Հունաստանում ընդհանուր՝ 7.200 որբեր, որից չափահաս 500 աղջիկներ տեղափոխվել են Սալոնիկ՝ աշխատանքի անցնելու նպատակով:

---

[14] Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, էջ 156-157:

[15] Թաթոյան Ռ., նշվ. աշխ., էջ 5:

Սալոնիկի շրջանում տարբեր որբանոցներում՝ Գալամաթա, Սամսոնի և այլ որբանոցներում ապաստան է գտել 1.038 որբ, Արևմտյան Թրակիայում՝ Սերեզում, Գավալայում և հարակից շրջաններում 1.485 որբ, որոնք եղել են Մերձավոր Արևելքի նպաստամատույցի որբանոցներից դուրս եկած չափահաս որբեր: Այսպիսով՝ ողջ Հունաստանում՝ 8.414 երեխաներ:

Ազգային խնամատարության տակ է գտնվել 203 որբեր՝ հիմնականում Սալոնիկի աղջկանց որբանոցում և վարժարանում, ինչպես նաև 25 որբ Սալոնիկի Գալամաթայի որբանոցում: Ամերիկյան միսիոներների անմիջական խնամքի տակ գտնվել է 17 որբ, հունական հոգատարության տակ՝11, օտար, անհատական հոգատարության տակ՝ 130 որբ, որևէ հոգատարությունից զուրկ որբերի թիվը կազմել 1.485:

Անհատների հոգածության տակ Քորֆուում մոտ 130 երեխաներ, իսկ որևէ հոգատարությունից զուրկ որբերի թիվը կազմել է 2.278 որբ, որոնց մեջ Տեղեկագրում նշվում է Արևմտյան Թրակիայի որբերը՝ 1.484, Սալոնիկի 700 չափահաս որբերը և Սամսոնի 93 որբերը:

Նշենք, որ Հունաստանում որբանոցներ բացվել են կամ որբախանամ աշխատանքները սկսել են Զմյուռնիայի դեպքերից հետո: Բնական է, Սիրիայի որբերն այստեղ չէին կարող տեղափոխվել, քանի որ Հունաստանը պատերազմական իրավիճակում էր: 1922 թ. վերջերին Ամերիկյան նպաստամատույցն իր որբանոցները տեղափոխել է Սվազից, Խարբերդի ու Մարզվանի և ուրիշ քաղաքներից դեպի Հունաստան: Կ.Պոլսի ճանապարհով Սեբաստիայից Հունաստան են անցել 5.600 որբեր:

Կ.Պոլսի 300 որբերը տեղավորվել են Քորֆու կղզում՝ Վիլհելմ 2 կայսեր ամառանոցում: Այս խմբին են ընկերակցել Թեոդիկը, Արշակ Ալպոյաճյանը, Օննիկ Չիֆթե Սարրաֆը, Գևորգ Կառավարենցը, Նշան Պեշիկթաշլեանը:

Հայ ազգային պատվիրակությունը Վահան Թեքեյանին նշանակել է իր լիազոր ներկայացուցիչը՝ զբաղվելու Հունաստանի, Սիրիայի, Եգիպտոսի, Շվեյցարիայի գաղթականների, մասնավորապես որբերի

հարցերով և կացությունը բարելավելու աշխատանքներով: Նրա պատրաստած տեղեկագրերն օգտագործվել են որբերի համար բարեփոխումներ կազմակերպելու համար:

1923 թ. հունիսի 2-ին Փարիզի ՀԱՊ նախագահ Նորատունկյանի կազմակերպությամբ Փարիզում խորհրդակցական ժողով է կազմակերպվում, համագումար է նախատեսվում օգոստոսի 19-ին. Ենթադրվում է, որ սույն տեղեկագիրը նախապատրաստվել է այդ համաժողովի համար: Մասնակցում են նպաստամատույցի, ՀԲԸՄ, Խորհրդային Հայաստանի մասակիցներ, որտեղ որոշվել է՝ հայ որբերին դաստիարակել Ազգային պատվիրկության ներկայացրած ծրագրի համապատասխան: Վահան Թեքեյանի նախաձեռնությամբ 2.500 որբեր Հունաստանից տեղափոխվել են Եգիպտոս: Տեղեկագրում մեջբերվում է Թեքեյանի տեղեկագրից հատված, որի համաձայն 7.200 որբերից մի մասը ներքին տեղափոխությունների մեջ են եղել:

Բուլղարիայում ապաստանած որբերի համար կազմել է 600, որից Այթես՝ 31, Յամբոլ՝ 31, Խասկովո՝ 45, Թաթար Պազարջիկ՝ 130, Աթարա Զակերա՝ 48 Ռուսե՝ 66, Վառնա՝ 68, Սլիվեն՝ 10, չարձանագրված որբեր՝ 149, նշված 600 որբերից 149-ը եղել են ազգային խնամարատության տակ:

Նշենք, որ դեռևս 1919 թ. նոյեմբերի 28-ին Սոֆիայի հայ քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդաժողովի մասնակցությամբ որոշվել է, որ բուլղարահայ գաղութը հոգա 300 որբերի խնդիրը, որոնք Հունաստանից տեղափոխվել էին Բուլղարիա:

Տեղեկագրում նշվում է, որ Ռումինիայում՝ Սթրունկայի որբանոցում ապաստանել են 200 որբ, որոնք գտնվել են ազգային խնամատարության տակ: Հավելենք, որ 1922 թ. հուվարին Կ.Պոլսից շուրջ 200 երեխաներ՝ 7-14 տարեկան, անցել են Ռումինիա: Տեղի ռումինահայ գաղութը դիմել է կառավարությանը, խնամակալ մարմին է կազմվել՝Արմենակ Մանսիլյանի ղեկավարությամբ, Հակոբ Սիրունու գլխավորությամբ, որոնց ջանքերով հիմնվել է Սթրունկա գյուղի որբանոցը, որն ունեցել է նաև վարժարան[16]:

---

[16] Ազատյան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անճելիս, 1995, էջ 256:

Շվեյցարահայ որբանոցում հանգրվանել են 56 երեխա: Ֆրանսիայում այդ թվականին արձանագրվել է 19 երեխա, որից 15՝ Մարսելում, որոնք որևէ խնամատարության տակ չեն գտնվել:

Կանադայում Ջորջթաուն քաղաքում ապաստանել են 50 որբ, որոնք գտնվել են կանադական նպաստամատույց կազմակերպության հոգածության տակ: Ավելի ուշ՝ 1925 թ. Քորֆույի որբանոցից Կանադայի հայկական նպաստամատույց ընկերությունն իր միջոցներով սկզբում 100 որբ է ուղարկել Տորոնտոյի մոտ գտնվող Ջորջթաուն ագարակ, որպեսզի երեխաները մասնագիտանան երկրագործական հարցերում:

Իտալիայում ապաստանած որբերի թիվը նշվում է 400: Վերջիններս Սամաթիայի 400 որբուհիներ են եղել, որոնք 1922 թ. դեկտեմբերին փոխադրվել են Իտալիա: Հռոմի Պիոս XI Պապը Կանտոլֆոյի իր ամառանոցը տրամադրել է որբերին կեցության համար[17]:

Այսպիսով, ամփոփելով ստանում ենք հետևյալ պատկերը

Բաժանում ըստ տարածաշրջանների	*որբ*	*Ընդհ.*
Կ. Պոլիս	3443	
Սիրիա	8630	
Երուսաղեմ	809	
Երևան	22.000	
Հունաստան	8414	
Բուլղարիա	600	
Ռումինիա	200	
Շվեյցարիա	56	
Ֆրանսիա	19	
Իտալիա	400	
Կանադա	50	
Ընդհանուր		44.621

[17] «Բազմավէպ», Վենետիկ, 1918, թիւ 1-12, էջ 155:

Վիճակագրական տվայլներ

Բաժանում ըստ հոգատարության մարմինների	որբ	Ընդհ.
1. Ազգային հոգատարություն		
Կ.Պոլիս	2386	
Երևան	550	
Հունաստան	25	
Բուլղարիա	600	
Ռումնիա	200	
1.2 ՀԲԸՄ		
Հալեպ	97	
Բեյրութ	575	
Երուսաղեմ	804	
		5242
2.Ազգային հոգատարություն և Մերձավոր Արևելքի Նպաստամատույց աջակցությամբ		
Սիրիա	1448	
Հունաստան	203	
		1651
3.Ազգային հոգտարություն և ամերիկյան աջակցությամբ		
Կ.Պոլիս	1057	
4.Ազգային անհատական հոգատարությամբ Ֆրանսիա	-	
5.Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի հովանավորությամբ		
Սիրիա	3984	
Երևան	21.450	
Վրաստան	-	
Հունաստան	5000	
6.Լորդ քաղաքագլխի հիմնադրամ		
Քորֆու	750	

7.Ամերիկյան միսիոներական կազմակերպություն		
Սալոնիկի որբանոց	17	
8.Ավստրալական նպաստամատույց		
Անթիլիաս	1326	
9.Կանադական նպաստամատույց (Ջորջթաուն)	50	
10.Շվեյցարական հոգատարություն	56	
11. Ֆրանս-Արմենիա հոգատարություն	4	
12. Վատիկանի հոգատարություն	400	
13. Հունական հոգատարություն	11	
14. Օտար անհատական հոգատարություն (Քորֆու)	130	
15.Որևէ հոգատարության ենթակայության տակ չգտնվող որբեր		
Սիրիա	1200	
Հունաստան	2278	
Մարսել (Ֆրանսիա)	15	
		3493
Ընդհանուր		**44.621**

Թերևս տեղեկագիրն առավել ընդգրկուն կլիներ, եթե ներառվեին իսլամական միջավայրում գտնվող որբերի մասին տվյալներ: Հայ որբերին վերաբերող պատրիարքարանի կազմած վիճակագրությամբ՝ թվագրված է 1921 թ. հունիսի 7-ով, հայ որբերի թիվը 164.169 էր, որից 90.819-ը՝ գտնված և որբանոցներում պահվող, այդ թվում՝ Օսմանյան կայսրության՝ Անտանտի զորքերի կողմից չօկուպացված, այսինքն՝ քեմալականների իշխանության տակ գտնվող տարածքներում՝ 12.480, դաշնակիցների զորքերի կողմից օկուպացված տարածքներում՝ 11.339, Հայաստանի տարածքում՝ 46.000, Վրաստանում և Կովկասում՝ 10.000, Կիպրոսում՝ 6.000 և Եգիպտոսում՝ 5.000, 73.350-ը՝ դեռևս չազատագրված որբեր, այդ թվում՝ չօկուպացված տարածքներում՝ 60.750, օկուպացված տարածքներում՝ 12.600[18]: Ակնհայտ է, որ

[18] Թաթոյան Ռ., նշվ. աշխ., էջ 6:

երկու տարիների տարբերության համար թվաքանակի նման փոփոխությունները բարդ է հիմնավորել մի հոդվածի շրջանակում, մասնավորապես, որ հոդվածում շեշտադրված է Տեղեկագրի թվերի վերլուծությունը:

Այսպիսով, որբերի թվաքանակի հետ կապված պետք է նշել, որ ինչպես որբանոցների, այնպես էլ մուսուլմանական միջավայրում գտնվող որբերի քանակի վերաբերյալ հնարավոր չէ ստույգ թվեր ներկայացնել, քանի որ որբանոցների և որբերի խմբերի տեղաշարժը շատ էր, ոմանք հեռանում էին որբանոցներից, ոմանք հարազատներին գտնելով վերադառնում, մի մասն էլ՝ չափահաս դառնալով լքում էր որբանոցը: Առավել դժվար է մուսուլմանական տներում և որբանոցներում գերության մեջ գտնվողների թվաքանակի հաշվարկները, քանի որ երեխաներից շատերն այդ տարիներին, ապրելով վախի ու սպառնալիքի մթնոլորտում, մոռացել էին իրենց անունները, հայկական ծագումն ու համակերպվել էին մուսուլմանական միջավայրին:

Ձեռագիր-տեղեկագիրը գալիս է լրացնելու, երբեմն նաև հակադրելու որբերի ու որբանոցների մասին որոշ թվական տվյալներ: Տեղեկագրի առաջին մասը ծանոթագրական նյութ է հայ որբերի, որբանոցների, ինչպես նաև նրանց խնամատար մարմինների մասին: Սույն տեղեկագրի վերլուծությունը, համեմատության մեջ դնելով այլ աղբյուրագիտական փաստերի հետ, հնարավորություն է տալիս առավել հավաստի տվյալներ նշել 1923 թ. դրությամբ գործող որբանոցների ու որբերի համար՝ հաշվի առնելով նմանատիպ տեղեկագրերի և փաստաթղթերի սակավությունը:

NARINE MARGARYAN
(AGMI)

ON THE DOCUMENT "ARMENIAN ORPHANS: BULLETIN ON SITUATION OF ARMENIAN ORPHANS, ORPHANAGES, CARING OFFICES AND STATISTICAL LISTS"

One of the significant sources for the research of the issues related to the Armenian orphans is the document "Armenian Orphans: Bulletin on situation of Armenian orphans, Orphanages, Caring Offices and Statistical Lists", which was elaborated in 1923 upon the demand of the Armenian National Delegation. This fact significantly increases the reliability of the document. Based on this document the paper presents the number of Armenian orphans, information on different orphanages and caring organizations.

This bulletin was never published before. It has a unique significance and comprises information on the Armenian orphans found in the Syrian deserts after the Genocide, who then have been dispersed in different directions. According to Bulletin, the number of orphans was 44621.

The lists of orphanages in Constantinople, Syria, Jerusalem, Republics of Armenia and Georgia, Greece, Bulgaria, Romania, Switzerland, France, Italy and Canada are presented in the bulletin.